ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԵԾ ԱՅՐՈՒՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Թ78<<13>> հունիսի 2016թ

ՀՀ Լոռու մարզպետ

Պարոն Ա.Նալբանդյանին

Հայաստանի Հանրա պետություն Լոռու մարզ

Մեծ Այրում համայնք փ4շենք 1

Հեռ.077456612 Email.metsayrum.lori@mta.gov.am

Հարգելի մարզպետ.

Ձեզ ենք ներկայացնում Մեծ Այրում համայնքի ավագանու թ10,11,12 որոշումները;

Առդիր <<3>>թերթ;

Համայնքի ղեկավար Ս.Նազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՄԵԾ ԱՅՐՈՒՄ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«10» հունիսի 2016թ. N 10

ՄԵԾ ԱՅՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԱՃՈՒՐԴՈՎ ՎԱՃԱՌՔԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ, 68-րդ հոդվածներով,

Մեծ Այրում համայնքի ավագանին Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Տալ համաձայնություն՝ Մեծ Այրում գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող և համայնքի սեփականությունը հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հետևյալ հողամասերը՝ 06-073-0257-0022 կադաստրային ծածկագրով 0.00787հա և 06-073-0257-0023 կադաստրային ծածկագրով 0.00358հա արոտավայրերը, 06-073-0257-002 կադաստրային ծածկագրով 0.00507հա խոտհարքը, 06-073-0257-0020 կադաստրային ծածկագրով 0.00124հա այլ հողատեսքը, ինչպես նաև՝ 06-073-0257-0018 կադաստրային ծածկագրով 0.40209հա արոտավայրը, ընդհամենը 0.41985 հա հողամաս՝ մեկ լոտով աճուրդով վաճառելու վերաբերյալ:
2. Աճուրդի մեկնարկային գինը որոշել վաճառվող հողամասերի մակերեսներին համամասնորեն, ոչ պակաս, քան յուրաքանչյուր 1 քառակուսի մետրի հաշվարկով 222 ՀՀ դրամ (բնակավայրերի հողերի համար սահմանված կադաստրային արժեքի չափով) և սահմանել ընդամենը՝ 935,000.00 (ինը հարյուր երեսունհինգ հազար) ՀՀ դրամ:
3. Համայնքի ղեկավարին՝ հողամասերն աճուրդով վաճառելու համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել աճուրդ և այդ մասին տալ հայտարարություն:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ՝

	ԱԱՀ	ԿՈՂՄ_3	ԴԵՄ_0	ՁԵՌՆՊԱՀ_0
1	Հակոբյան Հովիկ Գուրգենի			
2	Հովհաննիսյան Դավիթ Հակոբի			
3	Սարգսյան Հասմիկ Գևորգի			

Մեծ Այրում համայնքի ղեկավար Ս.Նազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՄԵԾ ԱՅՐՈՒՄ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«10» _հունիս_ 2016թ. N 11

ՄԵԾ ԱՅՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թ. դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաները կազմելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1918-Ն որոշմամբ սահմանված կարգով, հաշվի առնելով հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու վերաբերյալ «Թեղուտ» ՓԲԸ դիմումը և Մեծ Այրում համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Հավանություն տալ ՀՀ Լոռու մարզի Մեծ Այրում գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում առաջարկվող հողամասերի նպատակային նշանակության փոփոխման՝ համայնքի վարչական սահմաններում գտնվող եւ սեփականության իրավունքով «Թեղուտ» փակ բաժնետիրական ընկերությանը պատկանող 3.2359 հեկտար գյուղատնտեսական նշանակության հետևյալ հողամասերը.

h/h	հողամասի ծածկագիրը	հողատեսքը	հողամասի մակերեսը	Օգտագործման նպատակը
1	06-073-257-004	վարելահող	2.006	Ավազակոպիճի հանքավայրի լեռնահատկացման տարածք/բացահանք, լցակույտի մի հատված և այլ օժանդակ տարածքներ (համաձայն հատակագծի)
2	06-073-257-005	վարելահող	0.8499	
3	06-073-257-006	վարելահող	0.38	
Ընդամենը			*3.2359*	

որոնք ընդգրկված չեն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի կազմում, արդյունաբերության, ընդերքօգտագործման եւ այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիա փոխադրելու առաջարկությանը:

2. Համայնքի ղեկավարին՝ հողամասերի նպատակային նշանակության փոփոխման առաջարկության վերաբերյալ հողաշինարարական գործը ներկայացնել հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման ՀՀ Լոռու մարզային հանձնաժողովի քննարկմանը:

Ավագանու անդամներ

	ԱԱՀ	ԿՈՂՄ_3	ԴԵՄ_0	ՁԵՌՆՊԱՀ_0
1.	Պապիկ Առուշանյան			
2.	Սոֆյա Այվազյան			
3.	Սամվել Միրզոյան			

Համայնքի ղեկավար Ս.Նազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՄԵԾ ԱՅՐՈՒՄ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«10» հունիսի 2016թ. N12

ՄԵԾ ԱՅՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ<<ԹԵՐԵԶԱ_ԱՐՄԵՆ>>ԱԿ-ԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ՖԵՐՄԱՅԻ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔԻՑ ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ՖԵՐՄԱՅԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԴԻՄՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով և <<Թերեզա-Արմեն>>ԱԿ-ի դիմումը

Մեծ Այրում համայնքի ավագանին Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1.Մերժել՝ Մեծ Այրում համայնքի վարչական սահմաններում գտնվող <<Թերեզա-Արմեն>>ԱԿ-ին պատկանող անասնապահական ֆերմային 9000քմ սպասարկման տարածք վարձակալությամբ տրամադրելու մասին<<Թերեզա-Արմեն>> ԱԿ-ի ներկայացրած դիմումը;

Ավագանու անդամներ՝

	ԱԱՀ	ԿՈՂՄ_3	ԴԵՄ_0	ՉԵՌՆՊԱՀ_0
	Պապիկ Առուշանյան			
	Սամվել Միրզոյան			
	Սոֆյա Այվազյան			

Մեծ Այրում համայնքի ղեկավար Ս.Նազարյան